

Կոտայքի մարզպետը ՏԿԵՆ-ում մասնակցել է աշխատանքային խորհրդակցության

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունում ՀՀ Կոտայքի մարզպետ Ահարոն Մահակյանը մասնակցել է մարզպետների հերթական խորհրդակցությանը:

Օրակարգում ընդգրկված էր չորս հարց:

Առաջինը ներկայացվել է ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհների պաշտպանական գոտիների, հողերի օտարման և կառուցապատման վերաբերյալ հարցը:

ՏԿԵ նախարար Գնել Սանոսյանը հանձնարարել է մշտական հսկողության ներքո պահել միջպետական և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների պաշտպանական գոտիների, հողերի օտարման, դրանց հողային պաստառներում համայնքների ղեկավարների կողմից տրված շինթույլտվությունների օրինականության գործընթացը՝ բացառելով օրենքով չթույլատրված վայրերում հողերի օտարման և շինթույլտվությունների ապօրինի տրամադրման դեպքերը:

Երկրորդ հարցով ՏԿԵ ֆինանսական, հաշվապահական հաշվառման և համայնքային բյուջեների վարչության պետ Արտակ Ալբերտյանը ներկայացրել է 2023 թվականի հունիսի 15-ի դրությամբ կատարողականի վերլուծությանը:

Նախարարը հանձնարարել է գործադրել առավելագույն ջանքերը՝ ապահովելու համար բարձր կատարողական: Նախարար Սանոսյանին է ներկայացվել նաև 2023 թվականի հունիսի 1-ի դրությամբ համայնքների սեփական եկամուտների հավաքագրման և վերլուծությունը:

Քննարկվել է նաև համայնքային ծառայողների, տեղական ինքնակառավարման մարմինների և տարածքային կառավարման մարմինների աշխատակիցների վերապատրաստումների պատշաճ կազմակերպման վերաբերյալ հարցը:

Նախարարը հանձնարարել է հետևողական աշխատանք տանել համայնքային ծառայողների մասնագիտական գիտելիքների, գործնական կարողությունների, կառավարչական հմտությունների շարունակական կատարելագործման ուղղությամբ:

Քննարկվել են մի շարք այլ հարցեր: